

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանն ընդունել է ՀՀ-ում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Պյոտր Լիտվինին

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանն այսօր ընդունել է ՀՀ-ում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Պյոտր Լիտվինին:

Մարզպետ Դավիթ Գևորգյանը ողջունել է դեսպանի այցն Արագածոտնի մարզ, բարձր գնահատելով հայ-ուկրաինական միջպետական հարաբերության մակարդակը՝ դրանց հետագա խորացման և ընդլայնման հույս է հայտնել:

Դեսպան Պյոտր Լիտվինը ներկայացրել է Արագածոտնի, Լոռու և Արմավիրի մարզերում Ուկրաինայի պատվավոր հյուպատոս Սահակ Ղուդրատյանին՝ առաջարկելով վերջինիս հետ համագործակցված աշխատանք:

Մարզպետը հաստատել է իր կողմից ցուցաբերվող աջակցությունը և հավաստիացրել է, որ Արագածոտնի մարզում հյուպատոսի գործունեությանն առնչվող խոչընդոտներ չեն լինի:

Ծանոթությանը հաջորդած զրույցի ընթացքում կողմերը քննարկել են կրթության, մշակույթի, զբոսաշրջության, գյուղատնտեսության, ինովացիոն տեխնոլոգիաների ոլորտներին վերաբերող հարցեր:

Զրուցակիցները անդրադարձել են այս տարվա մայիս ամսին գործարկվող Օդեսա-Երևան չվերթի, Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի Երևանի կրթագիտական ինստիտուտում մարզի շրջանավարտների ուսանելու, 2019-2020թթ Ուկրաինական կողմի՝ Հայաստանում նախատեսվող ներդրումային ծրագրերի և ընթացիկ տարում ներդրումային համաժողովներին երկկողմ մասնակցության կարևորությանը:

Մարզպետ Դավիթ Գևորգյանը զրուցակիցներին է ներկայացրել ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականությունը, որը ենթադրում է արտահանման ծավալների և Հայաստանում արտադրվող ապրանքների շրջանառության մասշտաբների ընդլայնում:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ դեսպանը նշել է, որ կիսում է մարզպետ Դավիթ Գևորգյանի տեսակետը երկկողմ հարաբերությունների ամրապնդման վերաբերյալ, փաստել է, որ Ուկրաինան ամբողջովին աջակցում է Հայաստանում տեղի ունեցող գործընթացներին և իր գործունեությունը նպատակաուղղված է ՀՀ կառավարության հետ սերտ համագործակցության միջոցով տնտեսական, մշակութային կապերի ամրապնդմանը:

Մարզպետն ու դեսպանը զրուցեցին նաև երկու ժողովուրդների միջև բարեկամության պատմական ավանդույթների, տարբեր ոլորտներում ձևավորված հայ-ուկրաինական միջպետական հարաբերությունները գործնական քայլերի միջոցով նոր մակարդակի հասցնելու և երկկողմ հետաքրքրություններ ներկայացնող այլ թեմաների շուրջ: